Հաստատում եմ

Ախթալայի N 1 մ/դ

տնօրեն՝ ______________ (Լ. [illegible]իլյան)

(ստորագրություն)

13.09.2023թ.

Դասղեկի աշխատանքային ծրագիր

2023-2024 ուսումնական տարի

Լոռու մարզի Ախթալայի N 1 միջն. դպրոց

7-րդ դասարան

Դասղեկ՝ Կ. Ազբեկյան

Աշխատանքային շաբաթներ՝ առաջին կիսամյակ– 15 շաբաթ/15/

Երկրորդ կիսամյակ- 19 շաբաթ/19/

Դասարանում աշակերտների թիվը՝ 17

աղջիկներ՝ 7

տղաներ 10

7-*րդ դասարանի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան*

1. *Դասարանային մշակույթի կարևորությունը*
2. *Ի՞նչ է կոնֆլիկտը:Կոնֆլիկտի առաջացման պատճառները*
3. *Ակտիվ լսելու դերը համագործակցության մեջ*
4. *Քննական մտածողության բարձրացման կարևորությունը*
5. *Թիմային աշխատանք*
6. *Վստահության դերը թիմային աշխատանքում*
7. *Կոնֆլիկտների լուծման հնարավոր ելքերը տարբեր իրավիճակներում*
8. *Արդյունավետ որոշումների կայացում*
9. *Կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակները և պատվիրանները*
10. *Բոլորս տարբեր ենք, բոլորս հավասարապես արժանի ենք հարգանքի*
11. *Առաջնորդական կարողունակություններ*

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.**Դասարանի ընդհանուր բնութագիրը** : Աշակերտները շատ ակտիվ են, ինչը որոշ դեպքերում խանգարում է միմյանց հետ շփմանը, մի քիչ ագրեսիվ են միմյանց նկատմամբ, իհարկե լավ աշխատանք կատարվելու դեպքում իրենց թաքնված ներուժը բազմաթիվ հաջողությունների հնարավորություն կստեղծի:

2.Նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ուստարվա ընթացքում կլինեն բազմաբնույթ ՝ դասղեկական ժամեր , հանդիպումներ , զրույցներ, տեսանյութերի դիտում, արշավների կազմակերպում և այլն :

Ուշադրություն դարձնել էթիկայի և էսթետիկայի կանոններին :

3. Հոգևոր դաստիարակություն: Սրան նպաստում է Հայոց եկեղեցու պատմություն առարկան, որը սովորեցնում է երեխային իր կրոնի պատմությանը և զերծ պահում աղանդներից :

4.Գեղագիտական դաստիարակությունը կբարձրացնի նրանց գեղագիտական ճաշակը :

5.Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին խնդիրը հայրենիքը սիրելն է: Շատ կարևոր է վաղ հասակից երեխայի մեջ ձևավորել սեր դեպի հայրենիքը, երեխաներին սովորեցնել ազգային պարեր և երգեր :

6.Ֆիզիկական դաստիարակության դերը մեծ է առողջության, աշխատունակության գործում : Պատահական չէ ասված՝ «Առողջ մարմնում, առողջ հոգի» :

7. Աշխատանքային դաստիարակության մասին խոսվում է գրեթե ամեն դասաժամի : Այն կարող է լինել բազմաբնույթ: Աշակերտը պետք է սիրի և սիրով կատարի ցանկացած աշխատանք:

8. Բնապահպանական դաստիարակություն : Բնապահպանության խնդիրը այսօր լուրջ է : Երեխան պետք է իմանա , որ բնությունը ամեն րոպե իր օգնության կարիքն ունի :

9. Հայեցի դաստիարակություն – ազգային երգին և պարին ծանոթացում

10. Դպրոց - ընտանիք կապը պետք է սերտ լինի :Համագործակցության միջոցով հնարավոր կլինի իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն երեխայի դաստիարակությանը և կրթությանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման համար ուշադրության կենտրոնում պահել .

- Դասարանական մշակույթ
- Կարգապահություն և առաջադիմության բարձրացում
- Պատասխանատվության զգացումի բարձրացում
- Աշխատանք հետ մնացող աշակերտների հետ
- «Գիտելիքը ուժ է» սկզբունքին անդավաճան մնալ
- Միմյանց հանդեպ արդար և հանդուրժող լինելու աշխատանք տանել
- Երեխաներին ազատ արտահայտվելու և սեփական կարծիք ձևավորելու հնարավորություն տալ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	*Ի՞նչ է կատարվելու*	*Կատարողները*
04.09.23.	Դասարանային մշակույթ: Կանոն և ընթացակարգ	Դասարան,դասղեկ
11.09.23.	Աշակերտների օրվա ռեժիմի մշակում:Աշխ գործ քնն., ֆիլմի դիտում, ավագների ընտրություն	Դասարան,դասղեկ
18.09.23.	Պատերազմական իրավիճակում մեր անելիքները	Դասարան,դասղեկ
25.09.23.	Զրույց 44 – օրյա պատերազմի մասին	Դասարան,դասղեկ
2.10.23	Խմբային աշխատանք, հանրային խոսք, ելույթ	Դասարան,դասղեկ
9.10.23	«Գիտելիքը ուժ է» սկզբունքին անդավաճան մնալ, զրույց գիտելիքի կարըորության մասին	Դասարան,դասղեկ
16.10.23	Միմյանց հանդեպ արդար և հանդուրժող լինելու աշխատանք տանել	Դասարան,դասղեկ
30.10.23	Փորձենք ազատ արտահայտել մեր կարծիքը, կատարել խմբային և անհատական աշխատանք	Դասարան,դասղեկ
06.11.23	Ուշադրությունը կենտրոնացնել առաջադիմության	Դասարան,դասղեկ

	բարձրացման վրա: Առաջնորդական հմտությունների զարգացում	
13.11.23	Կարգապահական խնդիրների քննարկում: Տեսանյութերի դիտում:	Դասարան,դասղեկ
20.11.23	Իրավունք և պարտականություն, դրանց կարևորությունը	Դասարան,դասղեկ
27.11.23	Ի՞նչ կուզեի փոխել իմ վարքագծում, ինչու՞	Դասարան
04.12.23.	Բնական աղետներ. Ինչպե՞ս պաշտպանվել դրանցից	Դասարան,դասղեկ
11.12.23	Ճանաչողական այց համայնքի մշակութային օջախներ	Դասարան, դասղեկ
18.12.23	Ազգագրական պարերի պատմությունների ներկայացում	Դասարան, դասղեկ
25.12.23.	Կիսամյակային ամփոփում	Դասարան,դասղեկ
	II կիս .անելիքների ամփոփ ներկայացում	
08.01.24	«Ձմեռը մեր քաղաքում» թեմայով նկարների ցուցահանդեսի կազմ.	Դասարան,դասղեկ
15.01.24	Բոլորս տարբեր ենք,բայց ապրում ենք միասին: Հայկական ֆիլմի դիտում քննարկում	Դասարան,դասղեկ
22.01.24	Բոլորս տարբեր ենք,բայց ապրում ենք միասին: Հայոց բանակի դերը պետության կայացման գործում	Դասարան,դասղեկ
29.01.24	Ինչպիսի՞ն եմ ես: Ինքս իմ աչքերում	Յուր. աշ. Իր մասին
05.02.24	Թիմային աշխատանք, խմբային քննարկումներ	Դասարան,դասղեկ
12.02.24	Կոնֆլիկտի լուծման հնարավոր եղանակները, հարգանք դասընկերոջ և շրջապատի նկատմամբ	Դասարան,դասղեկ
19.02.24	Գիտելիքների շտեմարան, ծանոթություն	Դասարան,դասղեկ
26.02.24	Անվտանգ ինտերնետ	Դասարան,դասղեկ
04.03.24	Փոքրիկ ՀՀ քաղաքացի /քննարկում/: Առաջնորդական հմտություններ	Դասարան,դասղեկ
11.03.24	«Մեր քաղաքը մեր մեծ տունն է» – գնահատենք այն,	Դասարան,դասղեկ

	ինչ ունենք	
18.03.24	Ընթերցասեր դասընկեր /քննարկում/	Դասարան,դասղեկ
1.04.24	Գարունը մեր քաղաքում – նկարներ խմբերով	Դասարան,դասղեկ
08.04.24	«Ծնողների դերը երեխաների կյանքում» թեմայով քննարկում	Դասարան,դասղեկ
15.04.24	Վիկտորինայի հարցերի մշակում, անցկացում	Դասարան,դասղեկ
22.04.24	Ապրիլի-24 /Այլևս երբեք/	Դասարան,դասղեկ
29.04.24	Սուրբ Զատիկ /դերը և նշանակությունը/	Դասարան,դասղեկ
06.05.23	Աշխատանքի և աշխատավորների միջազգային օր /քննարկում/: Գնահատիր յուրաքանչյուրի աշխատանքը:	Դասարան,դասղեկ
13.05.23	«Ազգային արժեքների պահպանության կարևորությունը» թեմայով քննարկում	Դասարան,դասղեկ
20.05.23	Մի հաղթանակի պատմություն /եռատոն/, Տարեվերջյան ամփոփում	Դասարան,դասղեկ

Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ ՝ Ծեկվարդարյան Լիլիթ

Քարտուղար՝ Նոնա Դանիելյան

Անդամներ ՝ Ասլանյան Մարիամ

Աշակերտական խորհրդի անդամներ

Չոբանյան Արամ, Ալեքսանյան Թամարա, Նարե Բեգջանյան, Ջահանգիր Խաչիկյան